ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ [1])

II

Մեր առաջին յօդուածում Անդրկովկասի հողային խնդրի մասին մենք կանգ առանք հետևեալ կէտերի վերայ.

Հողի (այսինքն հողի սեպհականութեան, հողի տիրապետութեան և հողից օգուտ հանելու) մասին օրէնսդրութիւնները լուսաւորեալ երկիրներում կազմել են նոյն այդ երկիրների պատմական զարգացման համար մեծ էպոքներ։

Այդ հողատիրական օրէնսդրութիւնները արգասիք են եղած հասարակաց կարծիքի ղօրեղ հոսանքների, որոնց նախապատրաստողն են եղել մամուլը, գրականութիւնը։

Անդրկովկասում, ուսաց տիրապետութեան օրերով, կատարուած են բազմաթիւ փոփոխութիւններ հողատիրութեան մէջ։ Հողային պայմանները կանոնաւորելու թէ միտքը և թէ ամբողջ քննադատական պրոցեսը կատարուել են բարձր կառավարչական շրջաններում։

Հողային օրէնսդրական ակտերը մեզանում անցել են աննկատ, եղել են փոփոխական, առանց յարատեւութեան և ունեցել են յաճախ միայն քաղաքական բնաւորութիւն, որպէս այդ լինում է դեռ ևս ստոր կուլտուրայի մէջ գտնուող նուաճած երկիրներում, ուր քաղաքացիութիւնը դեռ ևս հաստատ արմատ չի բռնում։

Մենք յայտնեցինք, որ Անդրկովկասում, մասնաւորապէս Թրքա-հայկական նահանգներում մոցրած հողային օրէնքները մի խառն արդիւնք են նախ թուրքական և հայկական նախկին կարգերի, ապա ռուսական հայեացքների հողի, կալուածատիրոջ և գիւղացիների

---

[1]) Յօդուած առաջին տես «Մուրճ», 1889 թ. սեպտեմբեր. № 9։

մասին թէ 1861 թուականի ռուսական հողային ռէֆորմներից առաջ և թէ ռէֆորմներից յետոյ և երրորդ՝ արևմտեան-եւրոպական ազատիչ ագրարական ռեֆորմների ազդեցութեան։

Ապա մենք յայտնեցինք, և թէ մեր Կովկասեան հողատիրութեան օրէնքները ոչ միայն յաճախ փոփոխուել են, այլ և ներկայումս նոքա վերաքննութեան առարկայ են կառավարչական շրջաններում, և յորդորեցինք մեր թէ հայ և թէ ռուս մամուլին՝ սրտին մօտ առնել հողային խնդիրը և պարզաբանելով դորա վերաբերեալ բոլոր հանգամանքները՝ աշխատել երկրի պահանջները զգացնել տալ բոլոր ընթերցող հասարակութեան՝ հասարակաց կարծիք կազմելու նպատակով։

Այս բոլորը մի անգամ հաստատելուց յետո, մենք անցանք Կովկասեան և մասնաւորապէս Թրքա-հայկական նահանգների հողատիրութեան ուսումնասիրութեանը, կանգ առնելով առ այժմ միմիայն պետական (գօսուդարստուեննիէ) կոչուած գիւղացիների հողատիրութեան վերայ. խոստանալով հետևեալ անգամների համար պարզել դոցա վերաբերեալ ցայժմ կատարուած ռէֆորմների էութիւնը։

Այս մէկ բանը կրկնենք անցեալ յօդուածից, քանի որ այդ ամենահրաժեշտն է Կովկասեան հողատիրութեան ուսումնասիրութեան համար։ «Անդրկովկասի նահանգները ամենից առաջ պէտք է, վարչական տեսակէտից, բաժանել երկուսի.—նահանգներ, ուր հողերը կառավարւում են քաղաքացիական օրէնքներով, և նահանգներ, ուր հողերը դուրս են սովորական վարչութիւնների ձեռնհասութիւնից։ Այս վերջիններին պատկանում են՝ Զաքաթալի, Դաղստանի, Կարսի ու Բաթումի շրջանները, որոնց նկատմամբ ընդհանուր հողատիրական օրէնքները զօրութիւն չունին և դուրս են պետական հողերի մինիստրութեան ձեռնհասութիւնից։ Այդ շրջաններում տիրում են բացառիկ օրէնքներ։ Իսկ ուր մնած է կանոնաւորութիւն հողերի նկատմամբ և հողերը ենթարկուած են որոշ քաղաքացիական օրէնքների, դոքա են՝ Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Գանձակի և Բաքուայ նահանգները։

«Այդ նահանգներում գոյութիւն ունին երեք տեսակ հողատիրութիւն։ Երկրիս հողերի մի մեծ մասը պետութեան սեպհականու-

թիւն է, մի նմանապէս խոշոր մասը՝ աղնուական կալուածատէր դասակարգի սեպհականութիւն է, իսկ համեմատապէս մի փոքրիկ մասը՝ գիւղացիների սեպհականութիւն է։

«Համեմատ այդ երեք կարգի սեպհականութեան, գիւղացիները կենում են կամ պետական հողերի վերայ, կամ աղնուական կալուածատէրերի և կամ իրանց սեպհական հողերի վերայ։

«Այն գիւղացիները, որոնք կենում են պետական հողերի և կալուածատէրերի հողերի վերայ, ճանաչուած են որպէս պետական գիւղացիներ (գոսուդարստուեննիէ կրէստյեանէ)։ Այդպէս է օրէնքով։ Բայց անխտիր կերպով նոքա այդ անունով չեն կոչւում սովորական լեզուում և նոյն իսկ գրականութեան ու պաշտօնական թղթերի մէջ։ Պետական ընդունուած է անուանել միմիայն այն գիւղացիներին, որոնք կենում են պետական սեպհականութիւն համարուող հողերի վերայ, սովորական լեզուում կոչւում են կալուածատիրական գիւղացիներ (վլադէ՛լչեսկիէ կրեստյեանէ)։

Բայց թէ ինչու նոքա, օրէնքի առջև, անխտիր կերպով պետական գիւղացիներն են ճանաչուած, այդ մենք բացատրեցինք նորանով, որ օրէնսդիրը, միևնոյն անունը տալով երկու կարգի գիւղացիներին՝ կամեցել է հասկացնել, որ թէ պետական հողերի և թէ կալուածատէր աղնուականների հողերի վերայ բնակւող գիւղացիները հաւասարապէս ազատ գիւղացիներ են և որ թէ դատարանի առաջ, թէ տուրքերի կողմից նոքա նմանապէս հաւասար են (այս զանազանութեամբ միայն, որ պետական հողերի վերայ բնակողները ամբողջ տուրքը վճարում են տէրութեան գանձարանին, մինչդեռ կալուածատիրական հողերի վերայ բնակողները նոյն գումարը վճարում են՝ մասամբ կալուածատէրին, մասամբ տէրութեան, բայց երկուսի տուրքերն էլ հաւասար են)։

Այն հողային ռէֆորմները, որ կատարւել են ներկայ դարումս առաջ իշխանութեան ձեռքով, Անդրկովկասի Թրքա-Հայկական նահանգներում, վերաբերում են հենց միմիայն աղնուական կալուածատիրական հողերին, որոնք որպէս իմացանք, թէև բաւականին խոշոր բայց և այնպէս միայն մի մասն են կազմում նոյն Թրքա-Հայկական նահանգների հողերի։ Իսկ միւս կողմից վերաքննելի հողային օրէնքները և կարգերը վերաբերում են ոչ միայն կալուածատիրական հո-

ղերին, այլ և պետական հողերին։ Մամուլի կողմից ուսումնասիրելու և քննելու առարկան այդ իսկ պատճառով պէտք է կազմել ոչ միայն կալուածատիրական հողերին վերաբերեալ կարգ ու կանոնները, այլ և պետական հողերին վերաբերեալները։ Բայց մինչդեռ պետական հողերի մասին օրէնսդրութիւնը պարզ է և մի քանի խօսքով բացատրուող, կալուածատիրական հողերինը, ընդհակառակը, աւելի բարդ է և կրել է բազմաթիւ փոփոխութիւններ, առանց որոնց կանխաւ ծանօթութեան անկարելի է խնդրի քննութեան մէջ մի քայլ առաջ անել։ Ահա այդ պատմական մասին է, որ այժմ դիմում ենք։

Թրքա-հայկական նահանգներում ազնուական կալուածատիրական դասակարգին պատկանողները կրում են այլ և այլ անուններ՝ բէգ, աղալար, մելիք և միւլքադար։ Կալուածատիրական դասակարգ, որ գտաւ ուսուցց իշխանութիւնը մեր երկրում՝ դոքա էին։ Բայց նախ որ յայտնի չէր, թէ դոքա ինչ իրաւունքների տէրեր էին և ոչ էլ դոցա ամենքի իրաւունքները իրար հետ հաւասար էին։ Բէգեր գոյութիւն ունէին այն նախկին խանութիւններում, որոնց տեղը այժմեայ Գանձակի և Բաքուայ նահանգներն են։ Աղալարները գոյութիւն ունէին նախկին վրաց իշխանութեան թրքա-հայկական տեղերում, որ այժմ կազմում են Բօրչալուի, Ղազախի և Գանձակի գաւառները։ Մուլքադարներ գոյութիւն ունէին նախկին Հայկական երկրում (Армянск. область), այժմեայ Երևանի նահանգում։ Մելիքներ (հայ) կային Ղարաբաղում (Գանձակի նահանգի մասը)։ Բէգեր և այլ տիտղոսաւոր անձեր կային նաև Ախալցխայի փաշալիկում (այժմեայ Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները)։

Երևանի նահանգում, բացի միւլքադարները, կային նաև թիուլի տէրեր, բայց 1840 թուականին թիուլը վերածուեց տէրունական հարկի, այնպէս որ այդ դասակարգը չնչուեց։

Բացի այդ բոլոր տիտղոսատէրերից, կային և կան նաև խաներ, որոնց իրաւունքները սակայն բէգերի հետ հաւասար պէտք է համարել, այնպէս որ խանական դասակարգ առանձնապէս գոյութիւն չունի։

Այդ բոլոր տիտղոսաւորները ունէին և ունեն յարաբերութիւններ հողերի հետ, որոնք կամ բնակեցրած են գիւղացիներով և կամ բնակեցրած չեն։ Ուրեմն նոքա նոյնաժամանակ ունէին և ունեն յարաբերութիւններ ոչ միայն հողերի, այլ և գիւղացիների հետ, որոնք, օգտուելով այդ հողերից, յայտնի պարտականութիւններ ունէին դէպի այդ բարձր դասակարգի անձերը։

Որոնք էին այդ փոխադարձ պարտաւորութիւնները և որոնք էին առհասարակ բարձր դասակարգի իրաւունքները թէ հողերի և թէ գիւղացիների նկատմամբ՝ դոցա մասին չը կար ոչ օրէնսդրութիւն, ոչ գրաւոր յիշատակարաններ, ոչ վկայութիւններ։ Այդ պատճառով այդ առարկայի վերայ դանազան կերպով էին նայում տեղական ուս կառավարիչները։ Սակայն սոցա մեծ մասը ընդունում էր, որ բէգերը և աղալարները կամ ժառանգական, կամ ցմահ և կամ ժամանակաւոր իրաւունքն ունէին գիւղացիներից սովորութիւնով որոշուած տուրքեր ստանալու, բայց միմիայն այն պատճառով, որ նոքա էին կառավարում գիւղերից շատերը ոստիկանական կարգով։ Խաների իշխանութեան անկումով, Թրքական երկիրներում (Դանձակի և Բաքուայ նահանգները) կառավարութիւնը յանձնեց կոմենդանտներին, օկրուժնի նաչալնիկներին և ուչաստկովի զասէդատէլներին, որոնք, որպէս խանութիւնների ժամանակ էր, գիւղերի կառավարութիւնը յանձնում էին բայց ոչ միայն բէգերին և հասարակ գիւղացիներին, զեկավարելով անցողական հանգամանքների բացառիկ պայմաններով և կամ կամայականութիւնով։

Նոյն էր և Վրաստանի Թրքական գաւառներում (այժմեայ Բորչալուի, Ղազախի և Դանձակի գաւառների սահմաններում), ուր գիւղերի և Թափառականների բնակատեղիները գտնում էին աղալարների ոստիկանական կառավարութեան ներքոյ։ Աղալարները գիւղացիների վերայ ոչ միայն ոստիկանական իշխանութիւն էին բանեցնում, այլ և դատաստանական, թէև կարելի էր ապելացիա տալ աւելի բարձր իշխանութեան։ Աղալարների դասակարգին պատկանում էին այլ և այլ տիտղոսների մարդիկ՝ աղալարներ, սուլթաններ, վեքիլներ և, հայոց գիւղերում, մելիքներ։

Հայոց նահանգում (այժմեայ Երևանի նահանգ) երկու տեսակ հողատիրութիւն կար՝ միւլք և թիուլ։ Այդ նահանգի գիւղերի հո-

գերը սովորաբար բացառապէս գիւղացիների ձեռքումն էին, որոնք իրանց հողային բերքերի 1/30 մասը տալիս էին տէրունական հարկահաններին։ Այդ տուրքը երկուսի էր բաժանւում՝ մէկ մասը կոչւում էր միւլք և հասնում էր միւլքդարներին, իսկ միւս մասը կոչւում էր թիուլ և հասնում էր տէրութեան գանձարանին։

Միւլք ստանալու իրաւունքը տրւում էր պարսիկ կառավարութիւնից պետական ծառայութեան մէջ գտնւողներին, որպէս նաև գիւղերի կառավարիչ տարգաներին և տանուտէրերին։ Այդ իրաւունքը ժառանգական էր։ Տէրութիւնը երբեմն մէկին կամ միւսին շնորհում էր բացի միւլքից, նաև թիուլ ստանալու իրաւունքը, բայց միայն ցմահ։ Խանը իւր կամքով կարող էր թիուլը դարձնել միւլքի կամ երկուսն էլ միացնել և մէկ մարդու տալ։ Որովհետև միւլքը ժառանգական էր և կարող էր ծախւել ում և կամենար միւլքադարը, այդ պատճառով միւլքի տէրերը դեռ ևս անպատճառ աղնուականներ չէին. բայց երբ 1840 թուականին ռուսաց տէրութիւնը և դորա տեղ ծիսային հարկ նշանակեց, միւլքադարները առանձին նշանակութիւն ստացան, որպէս երկրի կալւածատէր դասակարգ։

Թրքա-հայկական նահանգներում, նոցա նուաճելու առաջին տարիներում, բնական է, որ ոչ բէգերի և ոչ աղալարների իրաւունքները որոշ չէին ռուսաց կառավարութեան համար։ Այդ պատճառով, այդ նկատմամբ, գործը թողած էր տեղական աւանդութիւններին և ռուսաց կառավարիչների կամայականութեան։ Այդ պատճառով յետագայ տարիներում յատուկ մասնաժողովների ձեռքով կատարեցին հետազօտութիւններ իմանալու համար, թէ ինչ իրաւունքով այդ տիտղոսաւորները վայելում են երկրի մէջ այն մեր վերը յիշած արտօնութիւնները։ Այդ գործի սկիզբը դրեց գենեռալ Երմոլովը, 1817 թ., որը յանձնեց մի կառավարական մասնաժողովի՝ հաւաքել տեղեկութիւններ, վերաբերեալ աղալարների իրաւունքներին նախկին Վրաստանի երեք թրքական դաւառներում (Բօրչալուի, Ղազախի և Գանձակի)։ Դոցա հիման վերայ Երմոլովը 1824-ին կազմեց մի կանոնագրութիւն պօլօժենիէ) աղալարների իրաւունքների և պարտականութիւնների մասին։ Նոյն Երմոլովը, մի քանի փոփոխութիւններով, հաստատեց Ղուբայի գաւառի համար դեռ 1812-ին կոմենդանդ Պոնամարիովից կազմած կանոնագրութիւնը այդ գաւառի գիւղերը կառավարող նահիրների և բէգերի համար։

Հայկական երկիրը (Армянская Область, այժմեայ Երևանի նահանգը) նուաճելուց և այդտեղ օբլաստնոյ կառավարութիւն հաստատելուց յետոյ կոմս Պասկևիչը կարգադրեց որ բոլոր նոքա, ովքեր անշարժ կալուածներ ունին, իրանց վկայագրերը ներկայացնեն։ Որոշուած ժամանակը սակայն սուղ լինելով, օբլաստնոյ կառավարութիւնը, երգեալների վկայութիւններով բաւականանալով, վկայագրեր տուեց անշարժ կալուածներ ունեցողներին։

Ախալցխայի նախկին փաշալիկում (այժմեայ Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները) Պասկևիչը յայտնեց տեղական բէգերին, որ ով նոցանից կը կամենայ հեռանալ Թիւրքիա, կարող է իւր անշարժ կալքերը ծախել։ Նոքա ծախեցին, բայց ոչ միայն իրանցը, այլ և շատ տէրունական հողեր, որոնք և ծուացին նոր առնողների ձեռքում։

Այդպէս էր դրութիւնը երկիրս նուաճելու սկզբնական տարիներում, մինչև որ Անդրկովկասում 1841 թուականին մացրուեց քաղաքացիական կառավարութիւնը։ Այժմ արդէն կարօտութիւն զգացուեց, որ գիւղացիների հողերից օգտուելու եղանակները որոշուեն ոչ թէ ժամանակաւոր կանոններով, այլ օրէնսդրական կարգով։

Քաղաքացիական կառավարչութիւնը մացնելուց առաջ, կատարուեց վերաքննութիւն (Բէւիզիա) Անդրկովկասիան բոլոր վարչական հիմնարկութիւնների սենատոր Գանի կողմից։ Վերջինս կասկած յայտնեց աղալարների և Բէգերի հողատիրական իրաւունքների տարածութեան մասին։ Սենատոր Գանը ընդունեց, որ աղալարները մի դասակարգ են, որը կոչուած էր ոստիկանական կառավարութիւն վարելու գիւղերում. և որ եթէ աղալարները հողային իրաւունքներ ունին, (արդիւնքի մասը ստանալու և այլն) այդ բղխում է ոչ թէ նորանից, որ այդ հողերը նոցա սեպհականութիւն են, այլ միայն վարձատրութիւն է նոցա ծառայութեան համար։ Բէգերի մասին նա յայտնեց, թէ նոքա չունին ժառանգական իրաւունք հողերի համար և որ ուրեմն Բէգի մահով վերջանում է այդ իրաւունքը և ժառանգներին կարող է անցնել նա միայն բարեհաճութեամբ տէրութեան։ Միւլքադարների և թիուլի տէրերի մասին Գանը յայտ-

նեց, որ թիուլները պետական գիւղեր են, որոնց եկամուտները տըրուում էին յօգուտ այն անձերի, որոնց նոքա պարգևում էին. իսկ միւլքերը ժառանգական կալուածներ են, որոնց տէրերը ստանում են եկամուտի $^2/_5$ մասը, իսկ $^3/_5$ մասը տէրութեան գանձարանն է մըտնում։

Սենատոր Գանի այս կարծիքները, որ ընդունեց նաև Անդրկովկասեան երկրի կառավարչութեան գլխաւոր խորհուրդը, արտափայլեցին տէրութեան կարգադրութիւնների մէջ։ Քանի որ աղալարների հողային իրաւունքները հիմնւում էին նոցա ոստիկանական ծառայութեան վերայ, և քանի որ 10 ապրիլի 1840 թուականի օրէնքով, Անդրկովկասի քաղաքացիական կառավարչութեան մասին, աղալարները հեռացւում էին ոստիկանական պարտադիր ծառայութիւնից, ուստի նոքա պէտք է զրկւէին նաև իրանց ցայժմ վայելած հողային իրաւունքներից։

Այդպէս էլ վճռւեց։ Իբր վարձատրութիւն այն արտօնութիւնների համար, որ տրւած էր նրանց 1818 թուականի կանոններով, որոշւեց տալ նրանց դրամական ռոճիկ ցմահ, աւելացնելով գիւղացիների հարկը։ Մելիքների և աղալարների հայկական 11 գիւղերում նոքա բոլորովին հեռացրւեցին պաշտօններից առանց որ և է վարձատրութեան։

Խորհուրդի այդ որոշումը բարձրագոյն հաստատւեց 28 մայիսի 1841 թուականի։

Բէգերի համար Կովկասեան խորհուրդը վճռեց նոյնը, բայց դրան հակառակեց պատերազմական մինիստր իշխան Չերնիշևը, որը կարգադրեց քննել գործը և որոշել Բէգերի իրաւունքները առանձին կոմիտետի ձեռքով (կոմիտէտ Բէգերի իրաւունքների մասին)։ Կոմիտէտը վճռեց, որ Բէգերը ունին ժառանգական սեպհականութեան իրաւունք բնակեցրած հողերի վերայ, բայց որ թուրքերի մէջ ճորտութիւն, ռուսաց մտքով, չը կայ։ Այդ և աղալարների համար կազմած կոմիտէտները որոշեցին, որ աղալարների նշանակութիւնը նոյն է ժողովրդի աչքում, ինչ բէգերինն է և որ ուրեմն նոցա բոլորի դրութիւնը պէտք է նոյն սկզբունքներով որոշել։

Այսպէս էր գործի դրութիւնը, երբ, Կովկասեան փոխարքայ նշանակւեց իշխան Վորոնցօվը, որի ուշադրութիւնը կայսր Նիկողայոսը

դարձրեց այս կարևոր խնդրի վերայ յայտնելով, որ «Աղալարներից հողեր խլելը սխալ գործ էր և որ նրանց պէտք է այն վերադարձնել»։

Իշխան Վ.օրոնցօւը ներկայացրեց Թագաւոր-կայսրին, փետրուար 1846 թ., իւր ղեկավարութեամբ գեներալ լեյտենանտ Լադինսկու կազմած կանոնագրութիւնը երկրիս բարձր մահմեդական դասակարգի հողային իրաւունքի և գիւղացիների ու հողատէրերի փոխադարձ յարաբերութիւնների մասին, որ քննեց Կովկասեան կոմիտէտը։ Փետրուարի 2-ին 1846 թ.-ին բարձրագոյն հաստատուած այդ կանոնադրութեան մէջ որոշուած է հետևեալը՝

Ժառանգաբար հաստատել բէգերի վերայ այն բնակեցրած և ոչ բնակեցրած հողերը, որոնցից նոքա այն ժամանակ օգտուում էին, վերադարձնելով նրանց և այն մէկելները, որ մի քանիսներից խլուած էին.

Ընդունել այդ հողերի վերայ բնակող գիւղացիներին իբր պետական գիւղացիներ, յանձնելով նոցա ոստիկանական կառավարութիւնը հողատէրերին։

Պարտաւորացնել այս գիւղացիներին զանազան տուրքերով յօգուտ հողատէրերի

Աղալարների մասին որոշուեց՝

Իշխան Վ.օրոնցօւի կարծիքների գլխաւոր հիմունքները թէ բէգերի և թէ աղալարների նկատմամբ՝ հաստատել.

Այդ կերպ նրանց ցոյց տրուած ողորմածութիւնը, յայտարարել նրանց ոչ իրաւունքի ձևով, այլ Թագաւոր կայսեր առանձին ուշադրութեան և գթառատութեան ձևով.

Թողնել Կովկասեան փոխարքային, նորա այցելութեան ժամանակ երկրի թրքական գաւառներին, յայտարարել աղալարներին և բէգերին, որ Թագաւոր կայսրը, իւր մշտական հոգացողութեան մէջ դէպի նոցա վիճակը, բարեհաճում է պարգևել առաջիններին և առ միշտ հաստատել վերջիններիս վերայ այն կալուածները, սպասելով սակայն, որ թէ նոքա և թէ սոքա հեռանալու ծառայութիւնով իրանց միանգամայն արժանի ցոյց կը տան Նորին Մեծութեան բարձր ողորմածութեանը դէպի նրանց։

Այսպէս ուրեմն, բէգերին և աղալարների վերայ հաստատուեցին այն բոլոր հողերը, որոնցից նոքա մի ժամանակ օգտուում էին։ Բայց մեծապէս հետաքրքրական է իմանալ, թէ, այդ նոր կանոնադրութիւնով, ինչումն էին կայանում գիւղացիների պարտաւորութիւնները դէպի բէգերը և աղալարները։ Նոցա հողերի վերայ բնակող գիւղացիները պարտական էին բէգերին և աղալարներին անձնական ծառայութիւններով և բանւորութիւնով, տնտեսութեան առարկաների մասով և հողային բերքերի մի հինգերորդ մասով ամեն մէկի հողաբաժինից, որ որոշած էր հինգ դեսիատին ամեն մի աշխատող հոգու համար։ Քաղաքներում ապրող և տէրունական հողերում բնակող գիւղացիներն էլ պարտական էին բէգերի օգտին զանազան տուրքերով, ըստ վազեմի սովորութեան՝ փողով, անձնական ծառայութիւնով և կամ արհեստի առարկաներով։ Գիւղացիները զրկում էին իրաւունքից թողնել իրանց հողաբաժինները և անցնել բնակութեան նոր տեղեր։ Բէգերին և աղալարներին տուեց ոստիկանական իրաւունք գիւղացիների վերայ, դատելու իրաւունք ոչ քրէական յանցանքների համար, և իրաւունք՝ գիւղացիներին մարմնապէս պատժել մինչ ռօզդու 25 հարուածը։

Այսպիսով, որպէս տեսնում ենք, կալուածատիրական գիւղացիները, բէգերի և աղալարների նկատմամբ, նոյն դիրքի մէջ դրուեցին, ինչպէս ռուսաց ճորտ գիւղացիները Ռուսաստանում իրանց հողատէրերի նկատմամբ։

Այդ առաջարկութեան մանրամասնութիւնների մէջ մտնելու առիթով, թէ Կովկասեան Կոմիտէի և թէ մինիստրների ու իշխան Վ.օրոնցօւի մէջ եղան սաստիկ մեծ տարաձայնութիւններ, որոնց հետևանքն եղաւ 6 դեկտ. 1846 թ. օրէնքը, ուր առաջին անգամ օրէնքի խօսքով յայտնուեց, որ թրքական գաւառներում ճորտութիւն երբէք գոյութիւն չի ունեցած, հետևաբար և փոխուեց վերևի կանոնադրութիւնը։ Այդ մասին սակայն մի այլ անգամ։

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ